# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30

### ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Ոստան համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

2. Ոստան համայնքի հաշվեկշռում եղած շրջանառու և հիմնական միջոցների հաշվառման արդյունքների հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

3. Արարատի մարզի Ոստան համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

4. Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի, աշխատակիցների թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

5. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի, աշխատակիցների թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

6. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները ձմռան սեզոնի ընթացքում դադարեցնելու, աշխատակիցների վարձատրության և մանկապարտեզի ծնողական գումարի չափի մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

7. Գույքահարկի արտոնություն տալու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

8. Ոստան համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատում:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31

## ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Ոստան համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Նվազեցնել. 11-01-02-52 ,,համայնքի ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ,, ծրագրի 4891 ,,պահուստային միջոցներ,, հոդվածը 2430.0 հազ.դրամով:

Ավելացնել. 01-03-03-55 ,,ընդհանուր բնույթի այլ ծառայություններ,, ծրագրի 5134 ,,նախագծահետազոտական ծախսեր,, հոդվածը 50.0 հազ.դրամով: 5112 ,,շենքերի և շինությունների շինարարություն,, հոդվածը 1000.0 հազ.դրամով: 04-03-02-55 ,,միջուկային վառելիք,, ծրագրի 5134 ,,նախագծահետազոտական ծախսեր,, հոդվածը 60.0 հազ.դրամով: 5113 ,,շենքերի և շինությունների կապիտալ շինարարություն,, հոդվածը 1000.0 հազ.դրամով: 05-02-01-55 ,,կեղտաջրերի հեռացում,, ծրագրի 5134 ,,նախագծահետազոտական ծախսեր,, հոդվածը 40.0 հազ.դրամով: 06-04-01-52 ,,արտաքին լուսավորության ցանցի շահագործում,, ծրագրի 5113 ,,շենքերի և շինությունների կապիտալ շինարարություն,, հոդվածը 280.0 հազ.դրամով:

Նվազեցնել 04-05-01-58 ,,մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում,, ծրագրի 4251 ,,շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում,, հոդվածը 1000.0 հազ.դրամով:

Ավելացնել 05-02-01-55 ,,կեղտաջրերի հեռացում ծրագրի 4213 ,,կոմունալ ծառայություններ,, հոդվածը 1000.0 հազ.դրամով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32

## ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԵՂԱԾ ՇՐՋԱՆԱՌՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստանի համայնքապետարանի հաշվեկշռում եղած շրջանառու և հիմնական միջոցների ամենամյա հաշվառման արդյունքները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Արարատի մարզի Ոստան համայնքի տարածքում 2021 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 1
Ոստան համայնքի ավագանու
10-ը դեկտեմբերի 2020թ.
թիվ 33-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Սահմանել Հայաստանի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի հետևյալ տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6 համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 25000 դրամ

7)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2700 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3600 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5100 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6900 դրամ.
- 200 –ից մինչև 500քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24000 դրամ:

բ. Ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 2700 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3600 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5100 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6900 դրամ,
- 200-ից մինչև 500քմ. Ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.

Բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 600 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

9) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

Բ. Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ.

Գ. Սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

Դ. Այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ.

Ե. Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

Զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10/ Հայաստանի Հանրապետության Ռստան համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝

օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

11) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ:

2. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0,3 գործակցի կիրառմամբ:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնքի 2021 թվականի տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույտվություն պահանջող, բոլոր շինարարական աշախատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականոցումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1.000 դրամ.

2/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ.

3/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2500 դրամ.

4/ Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2500 դրամ.

5/ Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ.

6/ Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1500 դրամ.

7) ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում յուրաքանչյուր երեխայի համար ամսական՝ 6000 դրամ.

8/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար:

9) Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց սահմանել տեղական վճարի հետևյալ դրույքաչափերը.

1. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ,

2. Ծննդօգնություն՝

ա . թեթև միջամտություն՝ 1000 դրամ,

բ . ծանր միջամտություն՝ 5000 դրամ,

3. Արյունառում կամ այլ նմուշառում՝ մանր կենդանի՝ 100 դրամ,

Խոշոր կենդանի՝ 200 դրամ,

Բացառությամբ ,,Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,, պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների,

4. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ

5. Ախտահանություն-1 քմ՝ 100 դրամ,

6. Միջատազերծում /դեզինսեկցիա/ - 1 քմ՝ 200 դրամ,

7. Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ - 1 քմ՝ 200 դրամ,

8. Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ,

9. Կենդանու հերձում՝ մանր կենդանի՝ 1000 դրամ,
խոշոր կենդանի՝ 3000 դրամ,

10. Կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը՝ մանր կենդանի՝ 1000 դրամ,
խոշոր կենդանի՝ 2000 դրամ,

11. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝
մանր կենդանի՝ 1000 դրամ,
խոշոր կենդանի՝ 2000 դրամ,

12. Կենդանիների հետսպանդային զննում /մինչև 2019թ. Հուլիս ամիսը/՝
մանր կենդանի՝ 1000 դրամ,
խոշոր կենդանի՝ 2000 դրամ,

5) Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր փաստացի բնակվող անձի համար՝ ամսական 100 դրամ,

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.500 դրամ,

բ. Ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 5. 000 դրամ

իսկ համայնքում

6) Իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար – 20 դրամ /1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար – 4դրամ /1քառ.մ/.

գ. Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 2 դրամ /1քառ.մ./:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34

### ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասով, ,,Նվազագույն աշխատավարձի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը՝ 9, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 2
Ոստան համայնքի ավագանու
10.12.2020թ. թիվ 34-Ն որոշման

# 2020Թ. ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 9
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 340000 |
| | *Հայեցողական պաշտոններ՝* | | |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 249000 |
| | *Համայնքային ծառայության պաշտոններ՝* | | |
| 3. | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 277000 |
| 4. | Գլխավոր մասնագետ 2.3-1 | 1 | 249000 |
| 5. | Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 224000 |
| 6. | Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 201000 |
| | *Տեխսպասարկման անձնակազմ՝* | | |
| 7. | Տնտեսվար | 1 | 224000 |
| 8. | Հավաքարար | 1 | 95000 |
| 9. | Պահակ | 1 | 190000 |

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35

## ,,ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ'' ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և ,,Նվազագույն աշխատավարձի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված 3
Ոստան համայնքի ավագանու
10.12.2020թ. թիվ 35-Ն որոշման

## 2020Թ. <<ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 11
Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | | 145000 |
| 2. | Դաստիարակ | | 134000 |
| 3. | Դաստիարակ | | 134000 |
| 4. | Երաժիշտ | | 92000 |
| 5. | Հաշվապահ | | 89000 |
| 6. | Խոհարար | | 89000 |
| 7. | Խոհարարի օգնական | | 92000 |
| 8. | Դայակ | | 89000 |
| 9. | Դայակ | | 92000 |
| 10. | Պահակ | | 92000 |
| 11. | Պահակ | | 92000 |

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 36

## ,,ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՁՄՌԱՆ ՍԵԶՈՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Հովհաննիսյանի ներկայացրած գրությունը՝ ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Եղանակի ցրտության պատճառով ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները 2020 թվականի դեկտեմբերի 31-ից դադարեցնել մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Մանկապարտեզի աշխատակիցներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ վարձատրել օրենքով սահմանված կարգով:

3. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի ծնողական գումարի չափը սահմանել 6000 /վեց հազար/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 37

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հնարապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ոստան համայնքի բնակիչ Սամսոն Հովհաննեսի Ղազարյանը զոհվել է արցախյան պատերազմում ավագանին

ՈՐՈՇԵՑ

Ոստան համայնքի բնակիչ Սամսոն Հովհաննեսի Ղազարյանի անվամբ գրանցված ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՑ Ե320 մակնիշի 36FN336 պետհամարանիշի ավտոմեքենայի 70826 /յոթանասուն հազար ութ հարյուր քսանվեց/ դրամ գույքահարկը զիջել:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 38

### ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի 2021 թվականի բյուջեն.

Եկամուտների գծով՝ 85820.2 հազ. դրամ

Ծախսերի գծով՝ 85820.2 հազ.դրամ

Հաստատել Ոստան համայնքի 2021 թվականի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ չափով.

1. Հողի հարկ՝ 7305.0 հազ.դրամ

որից՝

հ/հ ֆիզիկական անձանցից՝ 7200.0 հազ.դրամ

հ/հ իրավաբանական անձանցից՝ 105.0 հազ.դրամ

2. Գույքահարկ շենքերից ու շինություններից՝ 2400.0 հազ.դրամ

որից՝

գ/հ ֆիզիկական անձանցից՝ 600.0 հազ.դրամ

գ/հ իրավաբանական անձանցից՝ 1800.0 հազ.դրամ

Գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 9500.0 հազ.դրամ

3. Տեղական տուրքեր՝ 288.6 հազ.դրամ

Տեղական վճարներ՝ 6802.0 հազ.դրամ

այդ թվում՝ աղբահանություն՝ 4102.0 հազ.դրամ

Վարձակալությամբ տրված հողերից՝ 291.0 հազ.դրամ

Դոտացիա՝ 59233.6 հազ.դրամ

4. Հաստատել Ոստան համայնքի 2021 թվականի բյուջեի հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, հետևյալ չափով.

01-01-01-51 Կառավարման մարմինների պահպանում 35620.0 հազ.դրամ

4111 աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 29000.0 հազ.դրամ

4112 պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 2050.0 հազ.դրամ

4211 բանկային վճարներ 70.0 հազ.դրամ

4212 էներգետիկ ծառայություններ 1200.0 հազ.դրամ

4213 կոմունալ ծառայություններ 40.0 հազ.դրամ

4214 կապի ծառայություններ 400.0 հազ.դրամ

4215 ապահովագրական ծառայություններ 25.0 հազ.դրամ

4232 համակարգչային ծառայություններ 320.0 հազ.դրամ

4234 տեղեկատվական ծառայություններ 420.0 հազ.դրամ

4235 կառավարչական ծառայություններ 100.0 հազ.դրամ

4261 գրասենյակային նյութեր և հագուստ 300.0 հազ. դրամ

4264 տրանսպորտային նյութեր 950.0 հազ.դրամ

4267 կենցաղային և հանրային նյութեր 200.0 հազ.դրամ

4269 հատուկ նպատակային նյութեր 300.0 հազ.դրամ

4823 պարտադիր վճարներ 15.0 հազ.դրամ

4233 աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ 30.0 հազ.դրամ

4241 մասնագիտական ծառայություններ 200.0 հազ.դրամ

04-05-01-58 Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում 1000.0 հազ.դրամ

4251 շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 1000.0 հազ.դրամ

04-05-01-59 փողոցների պահպանում և շահագործում 200.0 հազ.դրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 200.0 հq.դրամ

01-06-01-55 գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվությունների տրամադրում 400.0 հազ.դրամ

4241 մասնագիտական ծառայություններ 200.0 հազ.դրամ

4823 պարտադիր վճարներ 200.0 հազ.դրամ

05-01-01-51 Աղբահանությունև սանիտարական մաքրում 4102.0 հազ.դրամ

4213 կոմունալ ծառայություններ 3012.0 հազ.դրամ

4215 ապահովագրական վճարներ 50.0 հազ.դրամ

4264 տրանսպորտային նյութեր 1000.0 հազ.դրամ

4823 պարտադիր վճարներ 30.0 հազ.դրամ

4822 այլ հարկեր 10.0 հազ.դրամ

05-04-01-55 կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն 1767.0 հազ.դրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 300.0 հազ.դրամ

4823 պարտադիր վճարներ 167.0 հազ.դրամ

4841 բնական աղետներից առաջացած վնասների վերականգնում 1300.0 հազ.դրամ

04-02-01-55 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում 1300.0 հազ.դրամ

4241 մասնագիտական ծառայություններ 1300.0 հազ.դրամ

06-04-01-52 արտաքին լուսավորության ցանցերի շահագործման և պահպանման աշխատանքներ 1800.0 հազ.դրամ

4212 էներգետիկ ծառայություններ և պահպանում 1500.0 հազ.դրամ

4251 շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 300.0 հազ.դրամ

09-01-01-51 նախադպրացական կրթություն 20000.0 հազդրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 20000.0 հազ.դրամ

09-02-02-51 հանրակրթական ուսուցում 100.0 հազ.դրամ

4637 ընթացիկ դրամաշնորհներ 100.0 հազ.դրամ

08-02-04-51 մշակութային միջացառումներիիրականացում 1200.0 հազ.դրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 200.0 հազ.դրամ

4269 հատուկ նպատակային նյութեր 750.0 հազ.դրամ

4216 գույքի և սարքավորումների վարձակալություն 250.0 հազ.դրամ

08-02-05-52 թատերական ներկայացումներ 200.0 հազ.դրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 200.0 հազ.դրամ

08-05-01-51 հանգիստ, մշակույթ և կրոն /այլ դասի չպատկանող/ 300.0 հազ.դրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 300.0 հազ.դրամ

08-02-01-51 գրադարանային ծառայություններ 2048.0 հազ.դրամ

4111 աշխատավարձ 1900.0 հազ.դրամ

4112 պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 148.0 հազ.դրամ

10-07-01-54 սոցիալապես անապահով անձանց աջակցություն 4100.0 հազ.դրամ

4729 այլ նպաստներ բյուջեից 3000.0 հազ.դրամ

4726 հուղարկավորության նպաստներ բյուջեից 1000.0 հազ.դրամ

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 100.0 հազ.դրամ

10-07-01-55 հասարակական կազմակերպություններին աջակցություն 250.0 հազ.դրամ

4819 նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին 250.0 հազ.դրամ

11-01-02-51 համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ 11433.2 հազ.դրամ

4891 պահուստային միջոցներ 11433.2 հազ.դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՎ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**